

ԲԱԺԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 • ուղարկոյ համար  
 Տարեկան 12 Ձր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արասահմանի հա-  
 մար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 Տր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 Իսկուսական տպոյ առարկին  
 երեսին համար 40 սակրիւ  
 հ. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սակրիւ հ. երեքին  
 սեկի սկզբանէն համար  
 20 Օլո գեղը կըլլայ:

# ՇՆԱՐԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՇԱՐՔԻ ԵՒ ՇՆԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկէյ  
 Խմբագրութեանս հասցին

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.

Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

Դրոյթիւնք եւ չին տրուիր

Պուղարկոյ համար ձեռքի  
 )( Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ )(

Արասահմանի համար ձեռքի  
 )( Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ )(

## ԿՐԿԻՆ ՈՌԻՍԱՆԱՀԱՅԵՐԸ

Ուումանահայերը շատ ու շատ  
 անգամներ յորդորեցինք թեր-  
 թիգ մէջ որպէս զի թողով ան-  
 տարբերութիւնը եւ օտարամոլու-  
 թիւնը քիչ մը աւելի հոգածու-  
 թեամբ եւ եռանդով վերաբեր-  
 ուին գէպի իրենց ազգն ու լե-  
 զուն, եւ սակայն ցտաւի է որ  
 դարձեալ ասոնք կը մնան իրենց  
 միեւնոյն անգրգռելի վիճակին  
 մէջ, նոյնիսկ անգիտակից թէ  
 ինչ ախուր պայմաններու մէջ  
 կը գտնուի իրենց ազգային  
 կեանքն ու դաստիարակութիւնը:

Յարգ եթէ բոլոր մեր աշա-  
 ջանքն ու բողոքներն անլսելի եւ  
 ապարդիւն մնացին, պատճառն  
 այն է որ Ռումանահայերուն  
 ստուարածիւ մէկ մասը բնաւ հա-  
 յերէն չի հասկնար, իսկ մէկ փոքր  
 մասը որ քիչ թէ շատ կրնայ կար-  
 զալ ու հասկնալ, այն ալ ո՛չ կը  
 ստանայ եւ ո՛չ կը կարգայ հայե-  
 րէն թերթ. հետեւաբար ուր որ  
 են հոն խարխաւած կը մնան:

Արդ՝ քանի որ ո՛չ միայն գրելով  
 այլ շեփորով իսկ խօսելու ըլլանք  
 հայերէնը հասկցող չի կայ, կը  
 խնդրենք Ռումանի մէջ գտնուող  
 բոլոր հայազէտներէն որ քիչ մը  
 ձանձուութիւն յանձն առնելով  
 բարեսրտութիւնն ունենան մերթ  
 ընդ մերթ թէ՛ Ռումանահայոց  
 նկատմամբ եւ թէ՛ Հայաստանի  
 պատահած դժբախտութեանց  
 վրայ գրուած յօդուածներն  
 թարգմանաբար անոնց ուշադրու-  
 թեան յանձնել, թերեւս այսպէ-  
 սով շօշափելի յեղաշրջում մը  
 կարելի ըլլայ յառաջ բերել եւ  
 ազգասիրութեան փոքրիկ կայծ  
 մը վառել ասոնց սառած սրտե-  
 րուն մէջ:

Այդ պարոններն թո՛ղ «քօքօ-  
 նաչ» կոչուին եւ աիկինները  
 «սուտաք», եթէ այդ է փա-  
 փաքնին. թո՛ղ ուղածնուն չափ  
 օտար լեզուներ սորվին ու խօ-  
 սին—սնորանալի է որ այդ լե-  
 զուններուն ամենէն անկարեւոր  
 նկատուածը դարձնուի իր օգուտ-  
 ները կրնայ ունենալ, մանաւանդ  
 մեզ պէս ցրտած ու աստանդա-

կան ժողովուրդի մը համար եւ  
 արդէն հայերն՝ ի բնէ գործի  
 մարդ՝ մասնաւորապէս տրամա-  
 դրութիւն եւ ունակութիւն մը ու-  
 նին շատ լեզուներ իւրացնելու,  
 բայց ազգային ամենահրաժեշտ  
 կապը չի կորսնցունեն, Հայ լեզ-  
 ուին առաջին տեղը ասն անոնց  
 մէջ: Թո՛ղ Մկրտիչը՝ «Կիցո»,  
 կարապետը՝ «Կօրկէ», Պետրոսը՝  
 «Բէթթուչ» եւ Պօղոսը՝ «Բալլոն» ան-  
 ուանուի. այդ փոյթ չէ մեզ, բայց  
 միշտ հայ ըլլալէ չի դադրին,  
 իրենց նախնաց լեզուին ու հա-  
 տարին չերմ աւանդապահներն  
 մնան, խորհին թէ անդին բար-  
 բարոս թիկտատութեան մը  
 ոտակ տաւապող հայերնիք մը  
 ունին լքած որ արեւնակից ժող-  
 վուրդի մը անմեղ արեան լիճե-  
 րուն մէջ կը լողայ, եւ եթէ ո՛չ  
 իրենց բազուկներով գէթ իրենց  
 բարոյական եւ նիւթական համա-  
 կրանքովն օգտակար ըլլան անոր՝  
 փրկութեան գործին մէջ: Ռու-  
 մանահայը որքան ալ ինքզինքը  
 հայ ըլլալէ հեռու նկատէ, որ-  
 քան ալ ինքզինքը Ռումէն մը  
 կեղծէ՝ դարձեալ չի պիտի դադ-  
 րի բնաւ Արմէն մը ըլլալէ Ռու-  
 մէնին եւ նոյն իսկ Ռումէն կառա-  
 վարութեան համար, ինչպէս չի  
 պիտի դադրի երբէք «Փրաման»  
 մը ըլլալէ հրեան, «Կրէչ» մը  
 ըլլալէ յոյնը, թորքոս մը տաճ-  
 կաստանցին եւ վերջապէս օտա-  
 րական մը ու բոլոր այն անհատ-  
 ները որոնք ազգով ու կրօնքով  
 Ռումէն մը ըլլալու բախտը չեն  
 ունեցած: Ատոր ապացոյցը նոյնիսկ  
 Ռումանական կառավարութեան  
 բերան համարուող թերթեր ամեն  
 օր կուտան, ինչո՞ւ այդքան կոյր  
 ձեւանալով չը տեսնել ու չը խոր-  
 հիլ լրջօրէն: Պրահմանները  
 բարիաներու պիղծ յարաբերու-  
 թենէն այնչափ խոյս տուած չեն  
 եւ ոչ ալ երբայեցինքը Ամալէ-  
 սիթներն այնչափ ատած են որ-  
 քան Ռումէնը կուտէ եւ խոյս  
 կուտայ օտարականներէն. սա-  
 կայն երբ դրամականի վրայ է  
 խնդիրը, Ռումէնը երբէք չը  
 քաշուիր ամէն սուրբութիւն աչք  
 առնելով օտարականին վերջին  
 սանթիմն ալ գրպանելու: Արդա-

րեւ Ռումանական կառավարու-  
 թեան ոչ կազմութեան եղանակը  
 ոչ քաղաքականութիւնը եւ ոչ  
 քաղաքավարութիւնը կը ներէ  
 յայտնի ու բացարձակ պայքար  
 մը մղել օտարականներու դէմ,  
 ինչպէս թորքոս բարբարոս ու  
 վայրենի կառավարութիւնը կը  
 սակայն անոր այդ ազատութիւնը  
 ու թողտուութիւնը աւելի մեծ  
 վտանգ մը կը սպառնայ հայերուս  
 համար երբ մենք փոխանակ օգ-  
 տուելու անկէ նոյնիսկ ինքնակամ  
 յօժարութեամբ մը կը պարու-  
 րուինք այդ ազատութեան պա-  
 տաններուն մէջ եւ կը մոռնանք  
 ինքզինքնիստ Ռումանիա համաշ-  
 իարհային քաղաք մըն է ուր ամէն  
 ժողովուրդ իր կրօնքով ու ազգու-  
 թիւնով ներկայացուած է ան-  
 խտրաբար, բայց անոնցմէ եւ ոչ  
 մէկը հայերուս չափ անձնամոռա-  
 ցութեան եւ ազգատեացութեան  
 ենթարկուած է: Հրեաներն, յոյ-  
 ներն, թորքերն եւ ամենավայ-  
 րենի կարծուած քուրդերն ան-  
 դամ յաջողած են իրենց ինք-  
 նուրոյն ազգութիւնն ու կրօնքն  
 անպարտ պահել շնորհիւ տիրող  
 ազատութեան: Եթե չէ հայե-  
 րուս, որ այժմճանչցուած ենք իբր  
 հանդարտաբարոյ, խոհուն լուսա-  
 միտ, յստաջիւմասէր, քաղաքա-  
 կիրթ եւ մեր ազգայնութեան  
 նախանձախնդիր ժողովուրդ մը:  
 Նախատինք չէ՞ մեզ հայերուս որ  
 երկա՞ր ու երկա՞ր դարերէ ի վեր  
 անյողողող կտրելով վայրենի ու  
 բարբարոս հարստահարչներու  
 ոտնձգութիւնները ու հալա-  
 ծանքը եկած հասած ենք քա-  
 ղակութեամբ ու լուսաւորուած  
 դարավերջի պատուանդանին եւ  
 կուզենք սրտի յօժարութեամբ  
 մոռնալ մեր լեզուն, մեր ա-  
 ւանդութիւնները որոնք մեզ-  
 մէ կողմուող չկայ—հեռանա-  
 լով մեր ազգութենէն ու հայրե-  
 նիքէն ու ձուլուելով այնպիսի  
 ժողովուրդներու որոնց գոյու-  
 թիւնը գեռ քանի մը տարիէ որ  
 երեսուն ելած է: Ո՞ր կը մնայ  
 մեր ազգային արժանապատու-  
 թիւնը, ու՞ր կը մնայ մեր նախ-  
 նիքներուն անյիշատակ ժամա-  
 նակներէն մեզ կտակած բարքերն

ու սովորութիւնները: Միթէ՞ լու-  
 սաւորուելէ վերջ առաթուր օա-  
 նակոխ պիտի ընենք մեր հայրե-  
 նիքի հնադարեան քաղցրիկ յի-  
 շատակներն ու սրբութիւններն:  
 Գաւառներն որ պիտի ըլլանք մեր  
 նախահայրերու պաշտած ու գուր-  
 գուրած հայ լեզուին եւ Հայաստան  
 երկրին. զանոնք պիտի լքենք  
 առանց ակնարկ մը ձգելու մեր  
 ետին: Ասոնք են մեր պարտակա-  
 նութիւնները որոնք պիտի գոր-  
 ծադրենք առանց շիկնելու հան-  
 դէպ այն քաղաքակիրթ ժողո-  
 վուրդներուն որոնք թէպէս մեզ-  
 մէ վերջ ծնունդ առած, բայց  
 մեզմէ աւելի ազգասիրական ու  
 հայրենասիրական եռանդով ու  
 արիւնով համակ տողորուած ի-  
 րենց անկախութեան համար  
 ամէն բան, հարստութիւն եւ ա-  
 րիւն զոհելու պատրաստուած կը  
 սպասեն:

Ո՛չ ազնիւ Ռումանահայ եղ-  
 բայրներ մեր պարտքը մեծ եւ  
 վսեմ է. պէտք է միանգամ ընդ  
 միշտ համոզուինք սա ճշմար-  
 տութեան թէ՛ ամեն ժողովուրդ  
 որ սիրտ մը կը կրէ եւ ազգասի-  
 րական զգացումը անոր մէջ մե-  
 առած չէ, մեր օտարացումը տես-  
 նելով պճաքնք պիտի զգայ մեզ-  
 մէ եւ եթէ մեր երեսներուն ալ  
 պօռալ չը համարձակին, գէթ  
 իրենք իրենց շրջանակներուն  
 մէջ չի պիտի դադրին երբէք  
 հայը կեղծաբար անբարոյակաւ  
 մը, եւ որ ամենէն աւելի անտա-  
 նելին վատ ու ազգազրուծ մը  
 նկատելէ:

Ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն մեր  
 շահը: Ազգայնութեան կապը՝  
 հայ լեզուն կը պակսի մեր քով,  
 որով հայ չենք կրնար համար-  
 ուիլ. եւ սակայն կատարելապէս  
 Ռումէն ալ չենք կրնար ըլլալ:  
 Արդ՝ ձիկանի մը չափ արժանիք  
 չի պիտի մնայ մեր քով: . . .

Այժմէն ձեռնարկելու ենք կա-  
 նոնաւորել մեր ապագան. այս  
 ալ հայերէնը ուսանելով եւ զայն  
 մեր զաւակաց ուսանելով պիտի  
 կարենանք սկսել: Մեր մօտ ոչ  
 թէ դրամն է որ կը պակսի, այլ  
 կամքը: Փոքրիկ զոհողութեամբ  
 մը ամեն բան իր տեղը կրնայ

Կալ քանի դեռ մամանակ է Յուսամ թէ մեր այս սրտաբուխ կոչը իր արժանաւոր ազգեցու- թիւնը կունենայ բոլոր այն քա- ղաքներու հայոց վրայ ուր ցարդ նախնական վարժարան մը ան- գամ ունենալու բախտը չեն ու- նեցած :

ՄԵՂՈՒ

Ռուսմանիա, 17 Փետրուար

ԲԱՑ ՆԱՍԱԿ

Բ. ԲԷՂԱՍԻՆ

Ներքեզք, որ քիչ մը ուշացայ ձեր Շարժումի 196 թուոյն մէջ ինձ ուղ- ղած գրութեան մասին երկու խօսք ըսելու նոյնիսկ մասամբ միայն . քանի որ անձնական անհրաժեշտ զբաղմունքներ կարգիւն զիս երկար զրկու փափաքիս յազուրդ տալ : Ուստի երբ սա կարճ միջոցը ներկելի կը կացուցանէ անձուկ սողերով պար- զել մտածմունքներս, պարտ կզգամ ամէնէ առաջ հարցնել ձեզ, թէ, ին- չու՞ առիթով ներկի չըլլար գիտակից թղթակցի մը լրագրութեան յանձնել ա՛յն սեղանի վրայն որոնք սեղ- լուոյն հասարակութիւնը իրեն նիւթ ըրած իրողութեան հաւատարմ ընծա- յելով կը խօսի : Բան մը, որուն մենք եւս մէկէ աւելի պատճառներ ունէինք հաւատարմ . մանաւանդ որ այդ կար- գի սխուր երեւոյթներ մեր սզգին մէկ դասակարգի բարբերուն յա- կանիչը պարձած է :

Կըսէք որ կը ձայնակցիք ինձ իմէ իրօք Մամուրեան այդպիսի «անխոր- հուրդ ու ապերախտ» քայլ մը առնէ... Բայց ինչու՞ չէք ձայնակցիք ուրիշ շատ մը պարագաներու մէջ, որոնք նուազ ապերախտութեան դրօշմը չեն կրէր : Իր անցեալի «լաւագոյն» գործունէութիւնով սքզիլ նորա ներկայ աննախանձելութիւնը՝ ու- ղիչ արամարանութեան հակառակ կը գտնեմ :

Ինչպէ՞ս կարելի է յարգել այնպի- սիները, որոնք իրենց հանրային

գործոց մէջ քծնող-չողոքորթողի գերը կը կատարեն ի հաճոյս կարգ մը ջոջ- աղաներու : Հասարակական առաջ- բեկը գարձնել սոսկ անձնական շահու- ապարկէզ եւ դեռ նոյն հասարակու- թեան յարգանքը ւպասել, շատ սարօրինակ է :

Հա՞րկ է այս մասին երկար փա- տերու մէջ խորատուզուիլ . բաւական չի պիտի՞ ըլլայ արդեօք հրաւիրել բոլոր սկիզբակներ որպէս զի գէթ վերջին սարիներու Արեւելեան Մա- մուրեանը մէկ կողմէն, իսկ Իզմիրի ազգային հաստատութեանց սխուր վիճակը միւս կողմէն խղճմտութիւն աչքէ անցնէին ուր յստակ պիտի պարզուէր իրենց աչացը առաջ, թէ որպէս քողարկել ուզած է այդ «Մա- մուրե» սեղանոյս ազգային անկերպա- րան գրութիւնը... և այդ բաւա- կան չէ՞ դեռ, երբեմն թղթակիցնե- րու հրապարակած կարգ մը զեղծ- մունքներ կամ անսարքերութիւնէ ա- րաջացած վնասներն ալ անպատկառ- օրէն ձգնած է ջրել ու ամէն ինչ վարկագոյն ցոյց տալ... ու այս ա- մէնը լոկ մի երկու բաժանորդներ չի կորսնցնելու նկատումով... Այս է մամուր մը կողմը :

Կը տեսնեմ, որ ձեր դիտողութիւն- ները միակողմանի ըմբռնումով մը կարտայայտուին . այնպէս որ Իզմիրի վիճակին անսեղանի ըլլալինից պարզ ցոյց կուտայ, որ միայն կարելի էր ուղիղ բան մը ըսել մեր գրածներու մասին . որովհետեւ մեր բոլոր ակ- նարկութիւնները ուղղուած են Մա- մուրեանի ընթացիկ գործունէու- թեան եւ ոչ թէ նորա 50 տարուան անցեալը քննադատելու արամագրու- թիւն կամ յաւակնութիւն ցոյց տուած ենք :

Այդ բանը պիտի ընեն անշուշտ ա- պագայ ձեռնահաս անձեր, որոնք քննելով Մամուրեանի գործունէու- թիւնը պիտի հետախուզեն անսարա- կոյս եւ այն ժամանակն ու միջա- վայրը ուր ծնունդ առած եւ յարա- սեւած է Մամուրեան իր գրադէս- հրապարակարանի եւ ուսուցիչ-դաս- տիարակիչի պաշտօնները : Միայն թէ մենք նորա ներկայէն գատելով զինքը

եւ միւս կողմէն մեր շուրջը լաւ դի- տելով քիչ մը ուսուցիչ կը գտնենք այն ախտոցը զոր ոմանք կուգն- տալ իրեն ամէն ինչ հեռուէն քննե- լով, զիտելով : — Անտարակոյս Պու- սոյ թերթերը կամ Պ. Պոռեանցը պատգամ մը չեն կրնար ըլլալ մեզ, քանի որ դեռ շատ բան կայ ըսելիք Մամուրեանի մասին ու դեռ չէ ըսուած :

Մեղքի սեղանի կամ նման եկեղե- ցականի մը մեր ըսածները քիչ իսկ Մամուրեանին ըսածներս «անհամ» կը գտնէք : Ամենէն շատ հոս է որ զեղբերու մասին ձեր անասութիւնը կը յայտնէք : Մեղքի սեղանի եւ Մա- մուրեանի երկու անբաժան մտորակ- ներ են որոնց միոյն ակնարկել եւ միւսին ոչ անկարելի է . գորնէ այն խնդիրներու մասին որոնք Իզմիրի ազգային կեանքին կը վերաբերին... Արդարացի էք երբ կըսէք որ Մա- մուրեան իր ներկայ մարտով ալ մաքով ալ ձերացած վիճակին մէջ լուրջ բան մը չէ կարող ընել եւ մենք շատ պահանջկոտ ըլլալու չենք : Բայց երբ նա իր ձերացած գանկի թափով փոկներ իբր թարմ նուռնք մեզ կը հրամցնէ . մենք ալ պարտա- լուր ենք կարծեմ իրեն վերադարձնել զայն : Եթէ ինքը ունի գնահատու- լու արժանի անցեալ մը, հասարա- կութիւնը գիտէ վաղ կամ անագան գնահատել . բայց երբէք ներքի չըլ- լար իրեն որ «խաթր քերի» նկա- տումներով ոտի տակ տայ հասարա- կութեան շահերը, ու ձգի պղտորել հասարակութեան միտքը իր ցնորած արատգրութիւններով... :

ԹՂԹԱԿԻՑ

Իզմիր, 9 Փետրուար

Յ. Գ. — Այս նամակին հետ Շար- ժումի խմբագրութեան զրկեցի այն սեղանի վրայն զոր կը հաստատուի Մամուրեանին կողմէն ձեր արտա- մտագրութեան ստուգութիւնը : Թէ ձախուած է կամ ոչ այդ չը գիտեմ . եւ այդպիսի խնդիր մըն ալ, տու գուրբ բաւական զժուար գործ է . սակայն սա կը հաստատուի—զոր կարելորա- գոյնն է—թէ այս, Մամուրեան կո- թողը ուզած է ձախել : Մանրամասն

պարագաները հրատարակու թեան ապ ներուած չէ մեզ . քանի որ թուրքիոյ մէջ կապրինք մենք եւս թոյլ չը պի- տի սայինք այդպիսի փափուկ պա- րագայի մը մանրամասնութիւնը ե- րեւան հանել : Եթէ կուգէք կրնաք դուք եւս իմանալ նոյն սեղանի որով եւ լիապէս համոզու մը կը գոյացնէք որ իսկապէս ծախուելու արամագրու- թիւն եղած է :

Նոյն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌԱՒԻՐԻՉ, 31 Յունիս

Այդ գիշեր ես էլ ներկայ էի յիշված երեկոյթին . իմ ուշա- գրութիւնը մասնաւորապէս գրա- լել էր «Յայտարարութեան» ճակ- տին տպված հետեւեալ յուղիչ խօսքերը—«Յօգուտ չքաւոր աղ- քաններին... :

Այդ խօսքերը ինձ խոր մտա- ծումներ էին պատճառում . ամ- բողջ հոգեկան գրութիւնս լար- ված վիճակի մէջ էր, ակամայ ինձ հարց էի տալիս .

— Ո՞վքեր են թշուառներ ի մասին մտածողները : Ուրեմն թաւրիզում կա՞ն մարդիկ, որոնք թշուառութեան ե գու թի մասին զապափար ունին... :

Հետաքրքրելով տեղեկացայ թէ այդ երեկոյթի օգտակար զա- ղափարը յղացել է գործադրել է Պ. Տեսուչը :

Յաջորդ օր պատահեցի Պ. Տես- չին :

— Մի թէ՛ «Թաւրիզի Հայ. Բար. Ընկերութիւնը» աղքատ տաշա- կերաններին հոգ չէ տանում, որի համար միայն այդ ընկերութիւնը գոյութեան իրաւունք է ստացել, հարցրի :

— Այս տարի ո՞չ, միայն անց- եալ տարի մի քանի չքաւոր ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉ ԿՇԻՌ ՈՒՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՌՁԵԻ

(Հետեւեալ հատուածը քաղուածք մըն է 1847 ին Բարիդի մէջ հրատա- րակուած Բըվիւ ար ԼՕթիան անուն հանդէսի վեցերորդ հատորէն . յօդ- ուածագիրն է Պ. Է. Պոռէ : Շահեկան թուեցաւ մեզի Շարժումի ընթացող- ներուն ներկայացնել կիս յար առաջ գրուած այս քննադատութիւնը, որ այսօր իսկ իր բացարձակ նորութիւնը կը պահէ, աւելի դժգոհ գոյներով բանախն նկատմամբ ի հանդէպ բեր- ուած վերջին վայրագութիւններուն բերմամբ) :

«Մահմետական կրօնքին առջեւ բանախն իրեւ անձնականութիւն մը չը ներկայանար . այլ օգտակար իր մը կամ գործիք մը, զոր չի իրաւիչը չարաչար գործածելէ : Բո՞ւրիս առ- պարկը կը կազմէ ծառայութիւն եւ վաճառականութիւն, թերեւս մինչեւ

պանֆիլոսութիւն, բայց մէջ մը որ բռնախն հարստութիւնը իր վրայ տիրող տարբին ուշադրութիւնը գրա- լելու չափ մեծ ըլլայ, նախանձու- թիւնը կը թելադրէ զանի անոր կոր- ծանմանը պատրուակ մը որոնելու եւ այս կերպով վայրագ անյազութեանը մեղմ յաղուրդ մը կամ գոհացում մը գտնելու անոր կործանման եւ թշուա- ռութեանը մէջ :

Բանախն սիրով կը փարի հողագոր- ծութեան եւ իր երազը կը կազմէ ասի մը հող ունենալ իրեն սեփականի գաւկի գուրգուրանքով մը զայն պա- րարտեցնելու, մշակելու համար . սա- կայն այդ երազը հազիւ ձլիլ սկսած, շուտով կը փոխուի յուսախաբութեան ըստ որում բանախն ներքի չէ բա- բացարձակ կալուածատէր ըլլալ, ա- նիկա կը նկատուի միշտ գերին՝ մահ- մետական ընտանեկանութեան ի սպաս : Իրաւ է թէ օրինական տուրքերը սկզբունքով շատ ծանր չեն եւ այդ տուրքերը չեն պատճառ բանախն կեր- պով մը գերութեան վերածուելուն, այլ մասնաւորապէս կարգ մը քմածին տուրքերն են, որոնց հատուցմանը կը բռնադատեն զինքը կուսակալները եւ անոր ստորադաս պաշտօնատար- ները, այնպէս որ խեղճ քրիստոնեայ զիւղացին՝ այս անիրաւութիւններուն բերմամբ, յաճախ իսկ կը զրկուի ա-

մենէ առատ հունձքի մը օգուտներէն եւ իր չարքայ աշխատութեան պտու- ղէն :

Ուստի այս պատճառաւ շատ ան- գամ տեսնուած է որ անիկայ խոյս կուտայ ախտաւել, քանի որ ինքը չի պիտի վայելէ անոր օգուտները . կը հերկէ այնքան որքան պէտք ունի ընտանիքն սպրեցնելու համար . անա ինչու համար հողագործութիւնը հե- տղհեաէ յետամնաց է Թուրքիոյ սահ- մաններուն մէջ : Եւրոպացի ճամբորդ մը որ ուղեւորութեանը միջոցին վարժ է շարունակ մշակուած հ զերու ընդարձակածաւալ տեսարաններ վա- յելի, կը կարծէ թէ անպատի մէջ կը ճամբորդէ իբր ոտքը կը դնէ Օս- մանեան երկրին վրայ : Յայտնաբեր- տականին բանախն զուրկ է քաղաքա- կան իրաւունքներէ, գուցէ վախ կը տիրէ թէ հաւասարութեան մէջ բա- կան գերակշռութիւն չա՞նի եւ վերջ մը տայ սակաւ իր բոնապետներուն անարժան տիրապետութեան :

Եւրոպացի աղաւ ժողովուրդը դե- ռու չը հոգեւանէր թէ, նչ աստիճան խորին տառապանքէ կը հիւսելին արեւ- լելի այդ քրիստոնեայ ժողովուրդ- ները որք բնութեան շատ մը ստա- լելութիւններով օժտուած են՝ մաքի եւ հողային հարստութեան կրկին սե- սակէտով, եւրոպացին չը դրկէր այն

սխուր տեսարանը, որ ամէն վայր- կեան կը պարզուի բռնապետներու ա- հարեկիչ ձեռքին տակ բռնախն իր- բու անարգանք : Բանախն որ անցեալ փառքերու վերջելու մը ունի միշտ, համբերատարութեան անաղին գանձ մը պէտք է ունեցած ըլլայ կարենալ տանելու համար գերութեան ու նա- խատիքին ամենէն զարշիլ փորձերը որք չեն խնայուիր իրեն :

Բանախն երբ իսլամի մը տուն մտնէ, կամ անոր ներկայութեան ընդուն- ուի պարտաւորուած է ոտքի վրայ յարգանք սպասել մինչեւ որ հրաման տրուի իրեն նստելու եւ այն ալ գրե- թէ միշտ գրան մօտիկ գտնուած ա- թուին վրայ : Բանախն աչքերը գէտք չէ զիտող, պրպտող երեւոյթ մը ու- նեանայ թուրք մը ներկայութեան . հարկ է որ գլուխը ծածկու եւ բարեւ բոնած ըլլայ միշտ եւ ձայնը չը կրէ համարձակութեան եւ անվերջութեան ո՞ր եւ չէտ, այլ ընդհակա- ռակը, մեղմ, երկչոտ եւ կարի ակ- նածալից :

Բանախն դիրքը, թուրքին հան- դէպ, ոչ իսկ կը նմանի Եւրոպացի գատական աստեանին առ՛հա բերուած գատապարտեալին : Թուրքի մը տե- սութեան զայցող բան շատ անգամ պէտք է ձեռքը նուէր մը, համեմատք մը ունենայ անոր մատուցանելու հա-

շակերտների զգեստ էր մատակարարել. և դրա փոխարեն էլ իրա տեղեկագրում 50 սաների և սանուհիների անունն էր յիշած, մինչդեռ զգեստ ընդունող երախաների թիւը 10—15-ից աւելի չէր:

— Ինչո՞ւ համար ընկերութիւնը այս տարի չի օգնում զպրոցին և աղքատ աշակերտներին:

— Եթէ ընկերութեան նախագահից հարցնելու լինես, նա կը պատասխանէ թէ ընկերութեան կարողութեան ներած չափով կարող են նպաստել զպրոցին և թէ արդէն որոշված է աւել 300 թուման, առանց ուրիշ ծախսերի մասին մտածելու:

— Անցեալ տարի ո՞րքանով էր նպաստում:

— 600 թումանով:

— 600 թումանով... ուրեմն ընկերութեան ներկական վիճակը չի ներթափանցում անցեալ տարիվայ չափով նպաստել կրթական գործին:

— Ո՞չ. ընդհակառակը, ընկերութեան գրամագրու լսը անցեալ տարիվայից 3000 թուման մ'ը պատկանելի գումարով աւելացել է. անցեալ տարիվայ գրամագրու լսը 4786 թուման էր, իսկ այս տարի 7750 թուման ունի: գրամագրու լսը գրեթէ կրկնապատկվել է:

— Բայց ընկերութեան այս հակասական ընթացքը ինձ զարմանք է պատճառում. քանի որ գրամագրու լսը կրկնապատկված է, իրա նպատակն էլ նոյն համեմատութեամբ աւելանալու էր, մինչդեռ զրա շատ հակասակն ենք նկատում. անցեալ տարի արված նպատակ կէսն է սալիս, փոխան կրկինը տալու:

— Մենք էլ զարմանում ենք:

— Ինչո՞ւ չ'ապագան էր վերագրում, որ ընկերութիւնը մի այսպիսի անարդարանալի հակասական ընթացքի է հետեւում, և նոյնիսկ իրա ծրագրից շեղվում և հեռանում է կրթական և աղքատախնամ գործին նուազ կարեւորութիւն տալով:

— Տգիտութիւնից կամայականութիւնից և ետականութիւնից բացի ուրիշ պատճառ չեմ գտնում. մանաւանդ եթէ նկատուենք ընկերութեան քարտուղարի ուժեղ վրա եղած աւելացումը:

— Ո՞րքան աւելացած է:

— Ստացած ուժեղ կէսը:

— Ահա, մի բացարձակ հակասութիւն եւս. զպրոցի նպատակից պակսեցնել իսկ քատուղարի ուժեղ աւելցնելը:

— Այո՞ վնասակար հակասութիւն և այն էլ հանրային գործերում:

— Ընկերութիւնը այս տարի ինչո՞ւ համար տօնածառ չունեցաւ:

— Ուղում էր ունենալ, սակայն զպրոցի վարչութիւնը մերժեց, նկատի ունենալով իրա կազմելիք «Երեկոյթը» և եղած հրատարակման անպատշաճ ոճը:

— Սակայն վարչութեան մերժումը, երախաներին տօնածառի զուարճալի և կրթիչ հաճոյքից զրկել էր:

— Ճիշդ է ձեր նկատողութիւնը, բայց զպրոցի վարչութիւնը արդէն մանկական զուարճալի երեկոյթներ կազմած է, որ սօնածառից աւելի հրահանգող և կրթող է. բացի սրանից, սօնածառ կազմելով երախաներին շաքար բաժանելու փոխարեն, ինչպէս մտադրած էր ընկերութիւնը:

թիւնը, վարչութիւնն աւելի պատշաճ և օգտակար դատեց, աղքատ երախաներին զգեստ մատակարարելու համար կազմել անցեալ զիշխրվայ երեկոյթը:

— Իրաւունք ունիք. այդ զեղեցիկ միտքը ի՞նչպէս ծնաւ:

— Աշակերտների մէջ այնպիսի չքաւորներ կան, որոնց վրայ նայելիս, մարդու սիրտը կտորկտոր է լինում, անցեալ օր գիտութեամբ ծանօթացայ այդ խեղճերի սրտածմրիկ վիճակին. ահա՛ իրողութիւնը, պատմեմ ձեզ:

ՄԻՐՁԱ  
(Մնացա՛ր յարստի)

ԹԱՔԱՐ-ԲԱՋԱՐՃԸԳ, 3 Փետր.

Տեղւոյ մէջ թաղ. Խորհուրդի ընտրութիւն մը տեղի ունեցաւ, զոր մի քանի պարոններու քահանայքներու համաձայն Պատրիարքարանէ եկած որոշումներու հակառակ և կարգ մը զեղծումներու տակ կատարուեցաւ:

Յունուար 23ին, կանխաւ եղած հրահանգի համաձայն ժողովուրդը հաւաքուեցաւ զպրոցին մէջ քուէարկութեանց մասնակցելու. նոյն առաւօտ քանի մը պարոններ համախորհուրդ հինգ անուններ կրող նախապատրաստած քուէներ կը բաժնէին միամիտ ժողովուրդին, իրենց մօտ կանչելով մերթ ահանջնուն բաներ մը փոխառելով համոզել կը ջանային. Յիշեալ պարոնաց խմբակին կողմէ զիտողութիւն եղաւ Պատրիարքարանէ եկած որոշումներուն դէմ, ձայնակցեցին ստանց ընտրողական ժողովոյ անդամներէն ոմանք և հակընդէմ բաւական վիճաբանութիւններէ վերջ, նախագահ Ս. Հօր գրած նամակներն և Պատրիարքարանէ եկած որոշումներն կարգացուեցան. յիշեալ պարոնաց խմբակին Ս. Հօր յանձնուեցաւ, թէեւ միւս կողմէն ալ ամէն ջանք կը գործադրուի նոյն ընտրութիւնը վաւերացնել տալու համար. երեք շաբթի 25 յունուար նորընտիր թաղ. Խորհրդոյ երեք անդամներն Խ. Մանափեան, Թ. Մ. Ներսէսեան, Ն. Մելիքեան և հրաժարեալ թաղ. Խորհրդոյ երկու անդամներն Պ. Յարութիւնեան և Յ. Գէորգեան, ունենալով միասին Ա. Պետրոսեան, Մ. Պարտիզպանեան, Գ. Գէորգեան կը ժողովին Ս. Հօր սենեակին մէջ և բնութեան ու սպառնալիքներու առկա կը պահանջեն Ս. Հօրմէն որպէս զի եղած ընտրութեանց մասին հաւանութիւն տայ և իրրեւ օրինաւոր կատարած ընտրութիւն Պատրիարքարան տեղեկագրէ. Ս. Հայրը երբ օրինաւոր պատճառաբանութիւններ կը ներկայէ և ձեռնպահ մնալ կուզէ, բուն յարձակում կըլլայ իր վրայ:

Անտոն Յ. Շարիկեան  
—)(—

մար. Ամենեւին ներկի չէ բանտի մը իւրաքանչիւր հետ կրօնական վիճաբանութեան բռնուելը. պարզ քննադատութիւն մը մինչեւ մահուան պատժոյն կենթարկէ զինքը. մանաւանդ երբ Մարգարէի քար զութիւններուն դէմ ուղղուի այն:

Պօլոյ մէջ տեսնուած չէ մինչեւ այսօր ո՛ր և է հրատարակութիւն որ կրօնքի զպղծ հարցերու մասին զիտողութիւններ կամ պարզ քննադատութիւն մը պարունակէ: Գիրք և հարստութիւն ամէն ինչ է Թուրքիոյ մէջ. այդ երկու տարրերը իրաւունք կուտան անտեսելու և ոտնակոխ ընելու բանտի ամէն իրաւունքները Հպատակ քրիստոնեայ ցեղերու մտաւոր զերակնութիւնը կը պարտաւորեցնէ իւրամը որ վարչական և հաշուական գործերու մէջ կատարութիւնը երբեմն զիտողութիւն ցոյց տայ բանտին պատճառ տալու. գերիներու առեւտուրը միջազգային օրէնքով արգելքի տակ առնուեցաւ, սակայն ինչո՞ւ և բարոյացին լրջօրէն աչք չը դարձնէր Արեւելքի վրայ, ուր պիտի տեսնէր զերիներու շահագործումէն շատ աւելի զազիր բռնակալութեան անտարաններ (նոյն իսկ իրական գերակազմութիւնն ալ կը կատարուի ձոն, մանաւանդ Պարսկաստանի սահմանապիտին մօտ):

Գանի՛ քանի՛ քրիստոնեայ կիներ անխնայ կռուանդուին մահմետականներէ և կռուանդուներէ, սպառնալիքի տակ, անտոյց հարկները գերութեան այս պատկերները միթէ գերիներու վաճառականութեան արգելքին ենթարկուելու չափաւ արժէք չունին: Սովորաբար իւրաքանչիւր շնորհիւ պաշտօնի անցած քրիստոնեայ մը դատապարտուած է անոր ծառայելու և ստացած թոշակներէն աւելի բաժին հանելու. ասիկա լինի գաղնակցութիւն մըն է Թուրքի և բանտին միջև: Օրէնսդրութիւնը անուանական բան մըն է իւրաքանչիւր համար և Թուրք գատուորները շատ անգամ դատապարտութեան գրտակցութիւն այնպիսի խառնակ գոյն մը կուտան և կ'ընտանութիւններ կը յարուցանեն. զորս կարենալ հարթելու համար արգարութիւն խնդրող երկու կողմերը գրամի ուժին զիմել կը պարտաւորին. գատուորին ձեռքը ամենէ շատ իւզոտողը ի նպատակ իրեն վճիռ կը իյլէ. եւ այս գրամական հատուցումը, կաշառքը, յառաջ բերելու համար մահմետական գատուորին, չմիջոց կը դախի և ոչ ալ ներգաճուութիւն:

Գաղաքներու բռնաները բազմատարար անտեսելի կենցաղ մը ունին, բայց ներսերը անհանդուրժելի են,

բանան խուլ գործիք մըն է միշտ թուրքին ձեռք. ներկի չէ իրեն զիտողաբնութիւնը և Թուրքի և Թուրքի աւելի հանգստութիւն և նիւթական կարողութիւն ապահովել:

Յունուար 18-ի կիւր-խառնի խաբրը իւրաքանչիւր պիտի յաջողի սահման մը գնել բանտի դէմ ի գործ գրուած բոլոր անիրաւութիւններուն, քոլոր հարստահարութիւններուն):

Վերոյիշեալ հանգէսի հատորներէն միոյն մէջ ուշադրութիւնս հրահանգեց նաև հետեւեալ հատուածը.

«Փոքր-Ասիոյ մէջ և Երոպական քաղաքակրթութիւնը և գիտութիւնները տարածելու նպատակաւ «Սիւնիք» անուան ներքեւ հայերէ բաղկացած ընկերութիւն մը կազմուեցաւ այս օրերս, Չմիւսիոյ մէջ: Սոյն ընկերութիւնը՝ հիմնադրուեցաւ մեծամեծ զոհողութեանցը շնորհիւ, կանոնաւոր վարժարան մը հաստատուել յետոյ. «Արշալոյս Արարատեան» անուամբ օրաթիւթ մըն ալ հիմնել, որ ծաւալ պիտի տայ նախազուած ծրագրին:

Սուրբան Ապոստոլ Մէճիտը, Բլշիտ բաշան և Յ. Իրան կարգ մը ուրիշ կարեւոր պաշտօնատարներ՝ ուղեկով

ներն և Պատրիարքարանէ եկած որոշումներն կարգացուեցան. յիշեալ պարոնաց առաջարկեցին Ս. Հօր Պատրիարքարանէ եկած որոշումն բեկանել և ըստ այնմ քուէարկութիւն կատարել. Վարդապետը պատասխանեց թէ Պատրիարքարանէ եկած հրահանգներէն զուրս բան մը չեմ կարող ընել երբեք. երբ քանիցս այս խօսքերու կրկնութեանց խրատներուն շահացին մեր բողոքարկուները, նախագահ Ս. Հայրը առանձնացաւ իր սենեակը պատասխանատուութեան տակ շինալու համար. ընտրութիւնը կատարուեցաւ հակառակ Պատրիարքարանէ եկած հրահանգներուն:

Արդէն եղած ընտրութեանց դէմ բողոքելու համար 39--40 ստորագրութեամբ հանրագրութիւն մը պատրաստուեցաւ զոր Ս. Հօր յանձնուեցաւ, թէեւ միւս կողմէն ալ ամէն ջանք կը գործադրուի նոյն ընտրութիւնը վաւերացնել տալու համար. երեք շաբթի 25 յունուար նորընտիր թաղ. Խորհրդոյ երեք անդամներն Խ. Մանափեան, Թ. Մ. Ներսէսեան, Ն. Մելիքեան և հրաժարեալ թաղ. Խորհրդոյ երկու անդամներն Պ. Յարութիւնեան և Յ. Գէորգեան, ունենալով միասին Ա. Պետրոսեան, Մ. Պարտիզպանեան, Գ. Գէորգեան կը ժողովին Ս. Հօր սենեակին մէջ և բնութեան ու սպառնալիքներու առկա կը պահանջեն Ս. Հօրմէն որպէս զի եղած ընտրութեանց մասին հաւանութիւն տայ և իրրեւ օրինաւոր կատարած ընտրութիւն Պատրիարքարան տեղեկագրէ. Ս. Հայրը երբ օրինաւոր պատճառաբանութիւններ կը ներկայէ և ձեռնպահ մնալ կուզէ, բուն յարձակում կըլլայ իր վրայ:

Անտոն Յ. Շարիկեան  
—)(—

յաջալերել հայկական ազատագրութեան և լուսաւորութեան այս գործը. յայտարարած են թէ պաշտպան կը ձանդիսանան «Արշալոյս Արարատեան»-ի, որուն խմբագրութիւնը յանձնուեցաւ Տիար Գուրգոս Գոսպար Պաղտատարանի. բեղուն միտք մը՝ և բողոքական գիտելաց լիովին ծանօթ):

Փոփոքի է որ ներկային մէջ քիչ մը ծանօթութիւն սփռուէր մեզ «Սիւնիք»-ի և «Արշալոյս Արարատեան»-ի վրայօք, նաև Տիար Պաղտատարանի գործունէութեան նկատմամբ: Ներկայ սերունդին համար անծանօթ մնացած անուն մըն է այս, զոր Չմիւսիոյ անդամները արգաւիտեցան և նկարագրի այդ զէմքը, որուն զիտ կենդանի լինելն ալ տարակուսելի է շահերու համար:

ԽՅԻԿ  
Գահիրէ, 11 Փետրուար

—)(—

**ՀԱՇՈՒՆՆԵՐԻ ՔԱՌԱՄՍԵԱՅ**  
ԱՂՔԱՍԱԽ. ՄԱՍՆԱԽՄԲԻ Փ. ՊՕԼՍՈՅ  
1899 Հոկտ. 16-ն մինչև 31 Յունի. 1900

**ՀԱՍՈՅԹ** Լ. Ս.

Փակեալ հաշիւէն գանձապետ- պետին քով պատրաստ դրամ	54.30
Շարաքական գանձանակին հասոյթը	322.40
Եկեղեցւոյ բակը կեցող միա- յուն գանձանակէն	6.75
Օթանդակ երկասարգներու գանձանակէն	12.30
Տիկնոջ մը կողմէ եկեղեցւոյ բակը գանձանակին ձգուած Ծնունդի առթիւ եղած հան- գանակութենէն	10.—
Ծնունդի օրուան եկեղեցւոյ պնակէն	312.—
Ոմն իւր ամուսնութեան առ- թիւ փոխան շաքարեղէնի Տիկին Մ. Ալիսիա իւր աղուն մահուան տարեդարձին առ- թիւ	13.20
Գումար	40.—
Գումար	30.—
Գումար	800.59

**ԻՍԱԽԻ** Լ. Ս.

Աղքատ ընտանեաց շարաքա- կան նպաստ	135.—
Աղքատ ընտանիքի մը շարա- քական հացագին	47.40
Աղքատ հիւանդներու նպաստ	29.50
Աղքատ հիւանդներու դեղո- րէից	41.95
Աղքատ պանդուխտներու ճամ- բու ծախք	20.60
Աղքատ ընտանեաց տան վարձ	18.—
Աղքատ կոչկակարի մը գոր- ծիքի համար	3.—
Աղքատ հիւանդի մը հիւանդա- նոց փոխադրութեան	1.10
Աղքատ հիւանդի մը հիւան- դանոցի համար չորս օրա- կան	6.—
Աղքատ մեղմուղի մը համար պատանեաց	1.—
Աղքատ հիւանդի մը Պօլիս երթալու անցագիր	5.15
Աղքատ հիւանդի մը Պօլիս երթալու ճամբու ծախք	21.20
Պատահական աղքատներու նպաստ	11.50
Բժշկի համար կտրի ծախք	2.—
Ծնունդի առթիւ 34 աղքատ ընտանեաց բաշխուած նը- պաստ	100.50
Ծնունդի առթիւ աղքատ տղա- յոց հագուստ	13.—
Ծնունդի առթիւ աղքատ տղա- յոց ոտնաման	110.90
Ծնունդի առթիւ տնտես Տիգ- րանին տափատ մը	5.—
Շարաքական գանձանակը պտտնողին վարձք	40.—
Ձմեռուան մէջ աղքատաց բաշխուած փայտ	74.80
Փայտանոցին կղզանք մը	—60
Պանձանակի համար կնքա- մամ	—30
Պանձանակի մը շինութեան	3.—
Թղթատարի ծախք	—30
Ընկալարի եւ ալլիսի սպա- գրութեան	14.—
Գումար	715.20
Գանձապետին քով պատրաստ դրամ (*)	85.95
	800.95

Ի դիմաց Աղքատախնամ  
Մասնախմբի

Ասենազպիր Վ. Ասենապետի  
Ա. Յ. Սրվանան Մ. Պ. Աստուան  
Ֆիլիպէ, 13 Փետրուար

(\*) Սոյն պատրաստ դրամին փո-  
խարէն Աղքատախնամը պարտական

**ԱՋԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ**

Վառնայի հայ երկուսարգնե-  
րէն միոյն նախաձեռնութեամբ  
մէքտինանտ իշխանին ծննդեան  
օրը հեռագիր մը զարնուած էր  
իշխանին անցեալները Վառնայի  
մէջ մահուան դատապարտուած  
երկու հայերու կեանքը նուիր-  
ելի :

Աւրախութեամբ կը յայտարա-  
րենք թէ Պուլկարիոյ իշխանը  
այդ երկու հայերու կեանքը ի-  
րենց նուիրած է :

**Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ**

Ամերիկա, Պ. Ճիհան. — Դժբախ-  
տաբար չի պիտի կրնանք հրատարա-  
կել ձեր յօդուածը որովհետեւ շատ  
երկար է եւ նիւթը շատ կրկնուած :  
Մեծ սիրով կընդունինք ձեր սպա-  
գայ թղթակցութիւնները, եթէ ամ-  
փոփ եւ կարճ ըլլան :

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Քանի մը օր առաջ Սուլթանը  
իրատէով մը հրամայած էր օրէնք  
մը մշակել որ ապագային հանքե-  
րու շահագործումը միայն թրքա-  
հպատակներուն յանձնուի : Պե-  
տական խորհուրդը մշակած է  
այդ օրէնքը, եւ հիմա բոլոր  
գեւապանները միահամուռ բողո-  
քած են այդ օրէնքին դէմ յայ-  
տարարելով որ կառավարութեան  
այդ որոշումը անարդար է օ-  
տարահպատակներու անշարժ  
կալուածք ունենալու իրաւունքը :

— Եթե թրք. աշխարհագրական  
համաժողովը հրատարակած է իր  
անկեկագիրը ուր կան քսան որո-  
շումներ : Ստոնց մէջ աշխարհա-  
գրական գիտութեան համար կա-  
րեւոր որոշումներ են . առաջի-  
նը միջուկային ընկերութիւն մը  
հիմնել երկրաշարժները հետա-  
խուզելու համար, յետոյ յանձ-  
նաժողով մը, որ ովկիանոսներու  
խորութեան քարտէզը պատրաս-  
տէ :

Համաժողովը փափաք յայտ-  
նած է որ ամեն տեղ հին աշխար-  
հագրական անունները պահուին  
յայտարարելով որ «ամհնքէն  
ճանչցուած պատմական անուն-  
ները փոփոխելը բարբարոսու-  
թիւնն ըլլալէ զատ գիտութիւնը  
կը մթնցնէ եւ հազորդակցութիւնը  
ետ կը ձգէ » :

Վա՛յ Ռուսաստանին . որովհե-  
տեւ ամեն անուն Ռուսացնելու  
ցաւը ան ունի :

Յետոյ համաժողովը առաջարկած  
է 90 լիվ Տօքի. Աստարճեան եղբայրց,  
Ծնունդի առթիւ տղայոց հագուստ  
չինելու համար գնուած կերպասին  
փոխարժէքը . եւ 90 լիվ իր ծանր  
աշացաւին համար սակաւին հիւան-  
դանոցի մէջ դարմանուելու վրայ ե-  
ղող մէկի պանդուխտ Սանփան Դըլ-  
լատեանին 60 օրականը, ընդ ամէնը  
180 լիվ :

ամեն տեղ տարածութեան և կշռի  
տանորդական չափերը գործ  
դրուին և 100 աստիճան ունե-  
ցող շերտաշաղկը գործածուի :

Փէնէրալ Պիւլլէր հեռագրած  
է որ Փետրուար 18ին 73 սայլ  
պաշար հասած է Լէտամիս :

— Լօրէնսօ—Մարքուէլի մէջ  
լուր տարածուած է թէ նախա-  
գահ Քրիւկէր զացած է Օրանժ  
ճոռէյին հետ խորհրդակցելու  
համար :

Թայմըզը կը հաղորդէ թէ Քրիւ-  
կէրի երթալը լազաղութեան  
համար բանակցութիւն սկսելու  
մասին է :

— Պօլսոյ թերթերուն Եզրպ-  
տոսէն կը գրեն թէ Ապերիիոյ  
մէջ յայտնի ոտու գործիչ Լէօն-  
տէվ, որ Մենելիք թագաւորէն  
կոմս տիրուղու ստացած է, Գա-  
հրէ հասած է զինուած Սէնէ-  
կալցիներու ուղեկցութեամբ և  
Ծրանսա պիտի երթայ :

Լէօնտէվի հաղորդած տեղե-  
կութիւններու համաձայն Անդ-  
լիոյ անյաշողութիւնները հարա-  
ւային Ալիքիէի մէջ արդէն ազ-  
գած են Մենելիքի վրայ, և ան  
չուզեր սահմանազուխներուն վե-  
րաբերեալ բանակցութիւնները  
շարունակել Անդլիոյ հետ :

Նոյն թերթերը կը հաղորդեն  
թէ գերի բռնուած Օսման Տիկ-  
մայի գալուստը Գահրէի բնակիչ-  
ներուն մեծ հետաքրքրութիւն  
պատճառով է, Հազարաւոր մար-  
դիկ գացեր են երկաթուղիի կա-  
յարանը տեսնելու Մահաթի գոր-  
ծակիցը : Ժողովրդի մէջ ունէ  
թշնամակուն տրամադրութիւն չի  
նկատուի դէպի զերին . ընդ-  
հակառակը շատերը երկիրը թող-  
նալու կարոտասան են այդ շէյ-  
խին անունը :

Իշխանութիւնը արարներու այդ  
տրամադրութիւնը տեսնելով  
անդլիացիներու հրամանին հա-  
մաձայն, ամէն խիտ միջոցներ  
ձեռք առած են, ամէն մէկ հա-  
մակրական ցոյց զէպի գերին  
ճնշելու համար :

— Պ. Թագ. սառուափելի բաներ  
կը պատմէ Հնդկաստանի ներկայ  
սովի մասին : Սովի զլխաւոր  
պատճառը բաշտութիւնն է, Անյ-  
եալ 1897ի սովին մօտ 30 միլիօն  
մարդ զրկուած է սովեալներուն  
օգնելու, անդլիացիները զրկած  
էին 120,000 ոսկի, իսկ այս տա-  
րի, Թրանսօվալեան պատերազմի  
պատճառով, միայն 27,000, թէ և  
այս տարուան սովը աւելի սոս-  
կալի է :

— Աթէնքի մէջ շատ աշխա-  
տած են որ իբր սպայակոյտի  
զլուխ գերման ժէնէրալ չը հրա-  
ւիրուի . բայց ազգեցիկ շրջան-  
ներու մէջ համոզուած են որ պի-  
տի հրաւիրուի, միայն թէ կը  
սպասուի որ ազգային ժողովը  
պատերազմական նոր օրէնքներ  
ընդունի :

— Անդլիացիներուն անձնա-  
տուր եղած ժէնէրալ Քրոնթէի

Պատուոյ սուր մը նուիրելու հա-  
մար Բարիզի էնթրանդիժան  
թերթը հանգանակութիւն մը բա-  
ցած և մինչեւ ցարդ գումարը  
հասած է իբր 7,500 ֆրանք :

**ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԼ»**

«Վէսէլլօ» հայ դերասանական  
խումբը, այս գիշեր, Փետր. 26,  
առաջին անգամ ըլլալով պիտի  
ներկայացնէ «Թէրէզա» թատե-  
րախաղ 4 արար :

Խիտ ծիծաղաշարժ զուեշտ մը :

Վազը կիրակի գիշեր, Փետր. 27,  
պիտի ներկայացնէ «Պին պիր  
տիրէկ» տրամագոմէտի 4 արար :  
Ծիծաղաշարժ զուեշտ մը :

**Յ. ՃԱՆԿԻԼԻԿԱՆ**

ՆՈՐ ԲԱՔՈՒՄՆ՝  
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ  
Խիւ 389 Իսկիզկ-պաշի

Կը վաճառուի ծխախոտ, բոսթալի  
եւ ազերազգրի ամէն տեսակ բուլբու  
նաեւ զանազան տեսակ սիկարներ :  
Յձ Թուականին հրապարակ ելած  
Պուլկարիոյ գահաժառանգ Պօլիսի  
պատկերազարդ քառթ-փոսթալներ,  
որ այժմ չեն գործածուիր, նոյնպէս  
եւ կը վաճառուի «Շարժում» :

Շարժումը կը ծախուի նաեւ նա-  
մակատան դիմաց նոր բացուած փոք-  
րիկ գրատունը :

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա.  
Ջարրանլիկանի գրատունը եւ իբր-  
բազրութեանս մէջ :

**ԸՆԴՄԱՐՔԱԿ ԵՐԳԱՐԱՆ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՒԱԿ ԱՆՈՑ**

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր.  
սոյն երգարանը կը ծախուի Վառնա,  
Ա. Ջարրանլիկանի գրատունը նաեւ  
կը գտնուի ամէն տեսակ զարդանակ  
եւ վրայական գրքեր . դրամի փոխա-  
րէն կընդունի նաեւ նամակագրոյմ.  
Կնուս եւ վաճառում ամէն տեսակ  
գործածուած նամակագրոյմներու :

**ՊՕՐՍԱ**

Կառնու 25 Փետրուար

Վակօն	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	53—57	9.50—11.25
ՄԻՍԻՐ	55—58	6.20—6.50
ԱՐԲԱ	—	—
ԵՈՒԼԱՅ	—	—
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—

  

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	55—56	10.60—10.20
ԱՐԲԱ	40—44	6.80—9.40
ԵՈՒԼԱՅ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—58	6.80—7.20
ՏԱՐԸ	55—58	5.50—6.0
ՖԱՍՈՒԼԵԱ	100 դրլ	13—20

Հէր կիւն կէլէն մալ  
ՊՈՒՂՏԱՅ — առապա  
ԱՐԲԱ — »  
ԵՈՒԼԱՅ — »  
ՖԱՍՈՒԼԵԱ — »  
ՄԻՍԻՐ — »  
ՏԱՐԸ — »

Առապա մուսմէլէսի հարցոյն 22 40  
Ֆրանք հիսապը իլէ տիր.